Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեղվապահությունը պատմական Շիրակի տնտեսության հին ճյուղերից է: Այն բավականին տարածված զբաղմունք է ոչ միայն գյուղական, այլև քաղաքային բնակչության համար:

Մեղվաբուծության զարգացումը Շիրակում պայմանավորված է երկու հանգամանքներով. նախ դրա համար շրջանն ունի նպաստավոր բնակլիմայական պայմաններ՝ ուղղահայաց բարձրությունների (հարթավայրային, նախալեռնային և լեռնային գոտիների) առկայությունը, ծաղկող կերակրաբույսերի և տեխնիկական բույսերի լայնատարած մշակումը, ալպիական մարգագետինների և վայրի մեղրատու բույսերի առատությունը:[1] Մյուս ոչ պակաս կարևոր հանգամանքը Շիրակի բնակչության, և հատկապես Գյումրի-Ալեքսանդրապոլի ավանդական ուտեստների համակարգում մեղրի լայն կիրառումն է: Գյումրեցու սեղանի քաղցր կերակուրների բազմության մեջ քիչ չէին նաև մեղրով ճաշերը:[2] Որպես օժանդակ զբաղմունք, մեղվապահությունը չի կորցրել իր տնտեսական նշանակությունը նաև մեր օրերում:

Վերջին տասնամյակներին հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տրնտեսական տեղաշարժերի արդյունքում Շիրակում նկատվում է օժանդակ տնտեսական զբաղմունքների և անհատական տնային տնտեսությունների, այդ թվում նաև անասնապահական ճյուղ համարվող[3] մեղվապահության դերի և տեսակարար կշռի նկատելի աճ:[4] Հետևաբար Շիրակի մարզի ժամանակակից մեղվապահության վիճակի ուսումնասիրությունը ունի արդիական նշանակություն, որովհետև հնարավորություն կընձեռի պարզելու աշխատունակ տարիքի բնակչության ընդգրկվածությունն այս բնագավառում, ինչպես նաև ճշտելու մարզի բնակչության հիմնական տնտեսական զբաղմունքների համակարգում մեղվապահության, իբրև եկամտի հիմնական կամ լրացուցիչ աղբյուրի զբաղեցրած տեղն ու նշանակությունը:

Մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի[5] և պաշտոնական վիճակագրության տվյալների համեմատական վերլուծության հիման վրա փորձենք ներկայացնել մեղվապահության տարածքային կազմակերպումը Շիրակի մարզում:

Համաձայն ձեռքի տակ եղած պաշտոնական վիճակագրական տվյալների՝ Շիրակի մարզում 2002 թվականին մեղվաընտանիքների թիվը կազմել է 7857: Ըստ մարզային վիճակագրության գործակալության տվյալների՝ 1997-2002 թթ. դիտվել է մեղվափեթակների թվի աճ, որը կարելի է բացատրել ոչ թե մեղվաբուծության իրական աճով, այլ նրանով, որ վերջին հինգ տարիների ընթացքում ավելացել է մեղվափեթակների փաստացի գրանցումների թիվը (տես աղ. 1): Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ հատկապես Գյումրիում պահվող մեղվաընտանիքների թիվն անշուշտ ավելի մեծ է, քան ներկայացվում է, որովհետև մեղվապահությամբ զբաղվող շատ ընտանիքներ պաշտոնապես չեն գրանցվում պատկան մարմիններում՝ խուսափելով որևէ գործ ունենալ պետական կառույցների հետ:

---

[1] *Դ. Աղանյան, Կ. Բազեյան, Տնային տնտեսական զբաղմունքները Շիրակի բնակչության արդի կենցաղում, ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, 2002, էջ 74:*

[2] *Հ. Աղաբեկյան, Ակնարկ Ալեքսանդրապոլի կերակրատեսակներից, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 42:*

[3] *Հ. Գրգեարյան, Ն. Հարությունյան, Տնտեսական աշխարհագրական տեղեկատու բառարան, Եր., 1982 թ., էջ 245:*

[4] *Դ. Աղանյան, Կ. Բազեյան, նշվ. աշխ., էջ 74:*

[5] *Ա. Բոյաջյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տետր 1-2, 2003թ.:*

Աղ. 1. Մեղվաընտանիքների թվի շարժը Շիրակի մարզում 1997-2002 թվականներին[6]

Տարի	1997թ.	1998թ	1999թ	2002թ
Մեղվաընտանիքների թիվը	3277	3452	4853	7857

Աղյուսակից երևում է, որ հինգ տարիների ընթացքում մեղվաընտանիքների թիվն ավելացել է 4580-ով: Որ դա իրականությանը չի համապատասխանում, որոշ չափով պարզ դարձավ մեղվապահության վերաբերյալ Արթիկի տարածաշրջանի մի շարք գյուղական բնակավայրերում մեր կատարած հարցումների արդյունքում:[7]

Պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա՝ 1998 թվականին մոտավոր հաշվարկներով Շիրակում արտադրված մեղրի քանակը կազմել է մարզի գյուղատնտեսության համախառն արդյունքի 0,3%-ը, իսկ 2002 թվականին՝ 1,2 %-ը: 2002 թվականին մեղվաընտանիքների թվով Շիրակի մարզում առաջինը Արթիկի տարածաշրջանն է՝ 2690 մեղվաընտանիք, իսկ վերջին տեղում՝ Գյումրի քաղաքը՝ 295:

Աղ. 2. 2002 թվականի Շիրակի մարզի մեղվաընտանիքների բաշխումը և արտադրված մեղրի միջին քանակը[8]

Ենթատարածաշրջաններ	Մեղվաընտանիքներ	Տեսակարար կշիռը	Արտադրված մեղրի մոտավոր ծանակը /տ/
ք. Գյումրի	295	3,7	5,6
Ախուրյան	2346	29,8	44,6
Ամասիա	623	7,9	11,8
Անի	1435	18,3	27,3
Աշոցք	468	5,9	8,9
Արթիկ	2690	34,4	51,1
Ընդամենը	7857	100	149,3

Արթիկի տարածաշրջանի՝ խնձորենու այգիներով հարուստ Փանիկ գյուղում մեղվապահությամբ զբաղվում են ոչ գյուղացիական տնտեսություններ, որոնք ունեն 60 մեղվափեթակներ: Գյուղապետարանից տեղեկացանք, որ մեղվապահներից միայն մեկն է այդ զբաղմունքը համարում եկամտի հիմնական աղբյուր: Փանիկում մեղվափեթակները մնում են մինչև մայիս ամիսը, ապա հունիսից տեղափոխում են Արագած լեռան ավելի բարձրադիր գոտիներ և հոկտեմբերի սկզբներին նորից վերադառնում են Փանիկ: Վերջին տասը տարիների ընթացքում, հիմնականում շատ բնակիչների՝ արտագնա աշխատանքի մեկնելու պատճառով գյուղում դիտվել է մեղվապահների թվի նվազում: Այնպես որ այդ նվազումը երբեք էլ պայմանավորված չէ մեղվապահության ոչ արդյունավետությամբ: Ի տարբերություն Փանիկի, հարևանից Արևշատ և Սպանդարյան գյուղերում, ըստ բնակիչների տվյալների, մեղվապահությամբ զբաղվում է ընդամենը մեկ ընտանիք: Նույնն է պատկերը նաև Մեծ և Փոքր Մանթաշ գյուղերում, որտեղ մեղվապահությամբ զբաղվում են երկու ընտանիք և ունեն ընդամենը 3 մեղվափեթակ: Սարալանջ գյուղում մեղվապահությամբ զբաղվող ընտանիքների թիվը վեցն է, որոնցից մեկը՝ մինչև 60 մեղվափեթակ: Գեղանիստ գյուղում մեղվապահությամբ զբաղվում են յոթ գյուղացիական տնտեսություններ՝ հիմնականում ազգակից ընտանիքներ: Կատարած հարցումներից պարզվեց, որ վերը նշված գյուղական բնակավայրերում մեղվապահությամբ զբաղվում են աշխատունակ բնակչության 5-8 %-ը: Այդ թվի մեջ գերակշռում են 40-50 տարեկան տղամարդիկ, որոնց օգնում են ընտանիքի կրտսեր անդամները, երբեմն՝ նույնիսկ 70-80 տարեկան ծերերը (ինչպես Սարալանջ և Ախուրյանի տարածաշրջանի՝ Առափի գյուղերում): Ա. Գասպարյանի հաշվումներով՝ 100-ից բարձր տարիք ունեցողներ աշխատունակ ծերերի 90%-ը հովիվներ կամ մեղվապահներ են:[9] Արթիկի տարածաշրջանում հարցման ենթարկված մեղվապահների հիմնա-

---

[6] *ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, Գյումրի, 2002:*

[7] *Ա. Բոյաջյան, ԴԱՆ, տետր 2. Հարցումները անցկացվել են Արթիկի տարածաշրջանի Փանիկ, Անուշավան, Սարալանջ, Մեծ և Փոքր Մանթաշ, Գեղանիստ և այլ գյուղերում, 2003:*

[8] *ՀՀ ԱՎԾ Շիրակի մարզային գործակալության տվյալներ, Գյումրի, 2002:*

[9] *Ա. Գասպարյան, Մեղվապահությունը Հայաստանում, Եր., 1989, էջ 151:*

կան մասը պատասխանել է, որ մեղվապահությունը իր համար եկամտի լրացուցիչ աղբյուր է: Ի դեպ, Արթիկի տարածաշրջանի մեր այցելած գյուղական բնակավայրերում մեղվապահությունը, տնտեսության օժանդակ ճյուղերի մեջ զբաղեցնում է առաջնակարգ տեղ:[10]

Չեռքի տակ չունենալով պաշտոնական վիճակագրական տվյալներ, չենք կարող որոշակիորեն բնութագրել Արթիկի և Անիի տարածաշրջաններում մեղվապահության կազմակերպման դրվածքն ու իրավիճակը: Նույնը չի կարելի ասել, սակայն, Աշոցքի, Ամասիայի և Ախուրյանի տարածաշրջանների վերաբերյալ: Վիճակագրական բավականին հարուստ տվյալների առկայությունը թույլ է տալիս հնարավորին չափ մանրազնին ուրվագծել մեղվապահության տեղաբաշխումն այս տարածքներում՝ ըստ գյուղական բնակավայրերի: Ըստ այդ տվյալների՝ մեղվապահությամբ չեն զբաղվում Ամասիայի տարածաշրջանի 19 գյուղական համայնքներից միայն երեքում, Աշոցքի գյուղական համայնքներից 15-ում, Ախուրյանի տարածաշրջանի համայնքներից 12-ում (տե՛ս աղ. 3): Ամասիայի տարածաշրջանում մեղվափեթակների թվով առաջինը Մեղրաշատ գյուղն է՝ 105 մեղվափեթակ, վերջինը՝ Զարիշատը՝ 10 մեղվափեթակ:

Աղ. 3. Մեղվարնտանիքների տեղաբաշխումն ըստ գյուղական համայնքների Ամասիայի, Աշոցքի և Ախուրյանի տարածաշրջաններում 2002 թ.[11]

Մեղվարնտանիքների թիվը	Ամասիա	Աշոցք	Ախուրյան
	մեղվապահությամբ զբաղվող գյուղական բնակավայրերի թիվը		
10-20	4	1	1
21-50	9	7	7
51-100	1	2	3
101-150	2	-	5
151-200	-	-	-
200-ից ավելի	-	-	5
Ընդամենը	16	10	21

Ըստ այս երեք տարածաշրջաններում մեղվապահության կազմակերպման վերաբերյալ մեր կողմից կազմված քարտեզի՝ Ամասիայի տարածաշրջանում մեղվարնտանիքների 45,4 տոկոսը տեղաբաշխված է երեք գյուղական բնակավայրերում՝ Մեղրաշատում, Արեգնադեմում և Ամասիայում, իսկ ընդհանուր առմամբ տարածաշրջանում 100 գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով ընկնում է 38 մեղվարնտանիք, ինչը մարզի կտրվածքով ամենաբարձր ցուցանիշն է: Եթե նկատի ունենանք, որ մեկ մեղվարնտանիքից տարեկան ստացվում է մոտավոր հաշվով 18-20 կգ մեղր, ապա 2002թ. Ամասիայի տարածաշրջանում արտադրվել է մոտավորապես 11,2-12,4 տ մեղր (մարզում արտադրված մեղրի 8,1%), որը հայաստանյան շուկայում կարժենար մոտ 33-34 մլն դրամ: Ընդ որում, արտադրված մեղրի չնչին մասն է, որ սպառում են արտադրողները: Հիմնական մասը վաճառվում է:

2002 թվականին մեղվապահությամբ զբաղվում էին Աշոցքի 25 գյուղական համայնքներից տասում: Տարածաշրջանում մեղվարնտանիքների թիվը 468 էր՝ մարզում ամենափոքրը: Առկա մեղվարնտանիքների թվի 51,1% տեղաբաշխված է եղել երեք գյուղական համայնքներում՝ Սարապատում, Ղազանչիում և Մեծ Սեպասարում:[12] Մոտավոր հաշվարկներով նշված տարում այստեղ արտադրվել է սպառման շուկայում 25-27 մլն դրամ արժեցող 8,4-9,3 տ մեղր:

Ախուրյանի տարածաշրջանում 33 գյուղական համայնքներից մեղվապահությամբ զբաղվում են 21-ում: 2002 թվականին տարածաշրջանում մեղվարնտանիքների ընդհանուր թիվը եղել է 2346: Այդ թվի 56,7%-ը տեղաբաշխված է հինգ գյուղական բնակավայրերում՝ Կապս, Հայկավան, Երազգավորս, Հացիկ և Հովունի: 2002 թվականին Ախուրյանի տարածաշրջանում, մոտավոր հաշվարկով արտադրվել է 42,2-46,9 տ կամ մոտ 120-126 մլն դրամի մեղր:

---

[10] *Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, ԴԱՆ, Տետր 2:*

[11] *Շիրակի մարզպետարանի գյուղվարչության տվյալներ:*

[12] *Նույնը:*

ԱՇՈՑՔԻ, ԱՄԱՍԻԱՅԻ ԵՎ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ



Ամփոփելով կարելի է փաստել.

1. Մեղվապահությունը Շիրակի մարզի գյուղական բնակավայրերում տարածված և տնտեսության օժանդակ ճյուղերի մեջ համեմատաբար առաջնային տեղ զբաղեցնող ճյուղ է: Պաշտոնական վիճակագրական տվյալները հիմնականում չեն համապատասխանում իրականությանը. մարզում մեղվապահությամբ զբաղվողների և մեղվաընտանիքների իրական թիվն անհամեմատ ավելի մեծ է:

2. 2002 թվականին Շիրակի մարզում արտադրված մեղրը մոտավոր հաշվով կազմել է 149, 3 տ, ինչը սպառման շուկայում կարժենար մոտավորապես 440- 447 մլն դրամ (մարզի գյուղատնտեսական համախառն արդյունքի 1,2 %-ը):

3. Մոտավոր հաշվարկներով մեղվապահությամբ զբաղվում են Շիրակի մարզի գյուղական աշխատունակ բնակչության 5-7 %-ը՝ հիմնականում 40-60 տարեկան:

ПЧЕЛОВОДСТВО В СОВРЕМЕННОМ ХОЗЯЙСТВЕ ШИРАКА

Резюме *А. Бояджян*

В историческом Шираке пчеловодство было одним из традиционных отраслей подсобного хозяйства. В последнем десятилетии в Ширакском областном хозяйстве наблюдается увеличение роли пчеловодства. По официальным статистическим данным в 2002 г. в Ширакской области количество улей составляло 7857 штук. В этом году из 77 сельских общин бывших районов Ашоцка (Гукасян), Ахуряна и Амасии только в 47-и развивается пчеловодство. В прошлом году в Шираке произведено меда на сумму от 440-до 447 млн. драмов, что составляет 1,2 % ВВП сельского хозяйства области.